ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/175

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Հայրապետյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10546-2021 գրությամբ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.06.2021թ.-ի թիվ 02/16.4/5692-2021 գրության հիման վրա, 28.06.2021թ.-ին «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.06.2021թ.-ին:

29.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/175 համարի ծածկագիրը:

08.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 24.06.2021թ.-ի թիվ 02/16.4/5692-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի հունիսի 7-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10 ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<ԳԱՍ>> շենքերի և կառույցների

տեխնիկական հսկողություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից չի կատարվել (ներկայացվել է պարզաբանում):

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 06.07.2021թ.-ի թիվ 02/16.4/5963-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն տեղեկացնում է, որ Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և դրա վերաբերյալ տեղեկատվությունը 2021 թվականի հունիսի 24-ի N 02/16.4/5692-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն:»:

3. <u>«ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10546-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը, 01.07.2021թ.-ի թիվ 19-ՍՀ գրությամբ ներկայացնելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021թ.-ի հունիսի 7-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10 ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության համար հայտ է ներկայացրել նաև «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ն: Վերջինս պատշաճ կերպով պատասխանել է վերոհիշյալ հրավերի ծածկագրով նախատեսված համապատասխանության չափանիշներին՝ մեր տրամաբանական ինտերպրետացիաներով: Օրինակ,

ա) աշխատակազմի մասով.

մենք գտնում ենք, որ Հրայր Սարգսյանի 1983-1989թթ. «Հայէլեկտրո» արտադրական միավորման կապիտալ շինարարության ոլորտի տեխնիկական հսկության սեկտորի պետ աշխատելը պետք է բավարարի Պատվիրատուի կողմից ներկայացված 3 տարվա պահանջը: Էդվարդ Երիցյանն ունի տեխնիկական հսկիչի 2 տարվա և 3 տարուց ավելի քաղաքաշինական տեսչի աշխատանքային ստաժ: Մեր կարծիքով, վերջինս որպես որակի տեխնիկական հսկիչներին վերահսկող պետական մարմնի ներկայացուցիչ, կարող է իրականացնել կամայական օբյեկտի (էլ չեմ ասում, մասնակի վերանորոգման) տեխնիկական վերահսկողություն: Ինչ վերաբերվում է Վաչագան Օհանյանին, ապա նա 2 տարուց ավելի ժամանակաշրջանում (2019-2021թթ.) իրականացրել է ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի շինարարական և շինվերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն, իսկ մինչ այդ, մոտ 2 տարի իրականացրել է խորհրդատվական ծառայություն «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի համար (համակարգչային ծրագիր՝ բետոնի և ասֆալտբետոնի կազմի հաշվարկման), որը չի արտացոլվել նրա CV-ում:

բ) Մեթոդաբանության հավելված 1.2 մասով.

սրա փոխարեն մեր կողմից ներկայացվել է տեխնիկական առաջարկ, որովհետև, եթե այն քննարկենք քաղաքաշինության բնագավառի համապարփակ դաշտում, ապա նշված հավելվածը պետք է լրացվի միայն հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի (համադրություններով հանդերձ) առկայության դեպքում, որը մեզ չի ներկայացվել:

գ) Նմանատիպ փորձառության մասով.

մեր կողմից, որպես նմանատիպ փորձառության օրինակ նեկյացվել է ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ համայնքի 90,0 հագ խոր.մ տարողությամբ ջրամբարն, որն ունի ամենաբարձր ռիսկայնության աստիճանը:

Հաշվի առնելով, որ նշված հիդրոտեխնիկական բարդագույն կառույցն ունի նաև պոմպակայան, տրանսֆորմատորային ենթակայական և ծառայողական անձնակազմի համար քոթեջ, ուստի հանձնաժողովի կողմից արված առարկությունը համարում ենք անհիմն:

Եվ՝ վերջում: Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի (գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները) 6-րդ կետի ա), բ) և գ) ենթակետերի պահանջները մեր կողմից չեն խախտվել, ուստի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալին ուղղված գրության „հիմնավորումը,, համարում ենք ոչ իրավաչափ:»:

4. <u>ՍՑ-LO-2021/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.06.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1-ին կետի համաձայն՝ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից հաստատված չէ բոլոր մասնագետների համար ներկայացված ըստ տարիների մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը, իսկ ներկայացված մասնագետներից՝ Հրայր Սարգսյանը, Վաչագան Օհանյանը և Էդվարդ Երիցյանը տեխնիկական հսկողության բնագավառում չունեն հրավերով պահանջվող 3 տարվա աշխատանքային փորձ: Լրացված չէ մեթոդաբանության (Հավելված N 1.2) նկարագիր դաշտը, իսկ ներկայացված տեխնիկական առաջարկում (ծառայության մատուցման մեթոդաբանություն) ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը: Ներկայացված պայմանագիրը հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում չի համարվում պատշաճ իրականացված նմանատիպ պայմանագիր:

v. Նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի gasstex@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում:

vii. Հանձնաժողովի 22.06.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, փոխարենը գրությամբ ներկայացվել են պարզաբանումներ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովի կողմից որպես շտկում չեն դիտարկվել: Վերոնշյալով

պայմանավորված, Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10546-2021 գրությամբ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը

կազմում և հաստատում է գնման հայտը, որը խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում ներառում է, հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը: Ընդ որում, շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում գնային պայմանի համար սահմանվող չափանիշը չի կարող պակաս լինել քսան և ավել երեսուն միավորից:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ժ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում հայտով ներկայացնում է՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է … 2) հրավերով պահանջվող լիցենզիան և լիցենզիայի ներդիրները,

3) նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նմանատիպ է համարվում IV-րդ կամ IV-ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի օբյեկտի կառուցման կամ ամբողջական վերակառուցման կամ ամբողջական ուժեղացման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում,

4) աշխատակազմի մասին տվյալներ՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.1-ի, որին կցվում են որակավորումը հավաստող փաստաթղթերը՝ ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմը, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրերը, լիցենզիաները, արտոնագրերը, ինչպես նաև բոլոր մասնագետների մասով վերջիններիս գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունները մատուցելու վերաբերյալ, իսկ մատուցած ծառայության գնահատման համար պետք է ներկայացվի յուրաքանչյուր մասնագետի կողմից տեխնիկական հսկողության բնագավառում /որպես Ճարտարագետ-շինարար, Ճարտարագետ-էներգետիկ, Ճարտարագետ-էլեկտրիկ, Ճարտարագետ-հիդրոտեխնիկ/ առանձին օբյեկտների մասով մատուցված ծառայության մասին ըստ տարիների տեղեկատվությունը ՝ հաստատված հայտը ներկայացնողի կողմից,

5) ծառայության մատուցման մեթոդաբանությունը՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 1.2-ի,

6) իր կողմից հաստատված գնային առաջարկ՝ համաձայն սույն հրավերի Հավելված N 2-ի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 07.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1-ին կետով արձանագրվել

է, որ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից հաստատված չէ բոլոր մասնագետների համար ներկայացված ըստ տարիների մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը, իսկ ներկայացված մասնագետներից՝ Հրայր Սարգսյանը, Վաչագան Օհանյանը և Էդվարդ Երիցյանը տեխնիկական հսկողության բնագավառում չունեն հրավերով պահանջվող 3 տարվա աշխատանքային փորձ: Լրացված չէ մեթոդաբանության (Հավելված N 1.2) նկարագիր դաշտը, իսկ ներկայացված տեխնիկական առաջարկում (ծառայության մատուցման մեթոդաբանություն) ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը: Ներկայացված պայմանագիրը հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում չի համարվում պատշաճ իրականացված նմանատիպ պայմանագիր, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանություն-ները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի gasstex@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում: Սակայն Հանձնաժողովի 22.06.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, փոխարենը գրությամբ ներկայացվել են պարզաբանումներ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովի կողմից որպես շտկում չեն դիտարկվել: Վերոնշյալով պայմանավորված, որոշում է կայաացվել Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն

դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Պատվիրատուի 06.07.2021թ.-ի թիվ 02/16.4/5963-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ արտահայտած փաստական հանգամանքներին, առ այն, որ Մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և դրա վերաբերյալ տեղեկատվությունը 2021 թվականի հունիսի 24-ի N 02/16.4/5692-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ

ֆինանսների նախարարություն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից չի ներկայացվել այդ փաստը հավաստող որևէ ապացույց, ընդ որում՝ www.gnumner.am տեղեկատվական կայքում նույնպես առկա չէ նշված փաստը հավաստող արձանագրություն:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Հանձնաժողովի 22.06.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ, հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումը, Հանձնաժողովը որոշել է «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, իսկ հետագայում Բողոքներ քննող անձին ուղղված 06.07.2021թ.-ի թիվ 02/16.4/5963-2021 գրությամբ Պատվիրատուն հայտնում է, որ հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումը, վերջինիս հայտը գնահատում է բավարար:

Ինչպես նաև, հարկ է նկատել, որ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.06.2021թ.-ի թիվ 02/16.4/5692-2021 գրությամբ հայտնել է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման, ուստի և հայտի մերժման մասին: Այդ գրության հիմքով է նախաձեռնվել «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.06.2021թ.-ի թիվ 26/26-1/10546-2021 գրությամբ «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/175 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «ԳԱՍ» շենքերի և կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**